**ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՆՈՐ-ՄԱՐԱՇ ԵՎ ԷՐԵԲՈՒՆԻ-ՆՈՒԲԱՐԱՇԵՆ**
**ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ**

*Թիվ Եա 5091 / 02*
*08 / 06 / 2022թ.*

*ք.Երևան, Հալաբյան 41ա, Հեռ./060/713-468/*

***Կարեն Արշավիրի Նազարյանին***
***/ք.Երևան, Շիրազի փողոց 20 ժենք բն 64/***

***Արմեն Վարդգեսի Եղիազարյանին***
***/ ք.Երևան, Իսրաելյան փողոց 43 շենք բն 25./***

*Կից Ձեզ է ուղարկվում թիվ 06236182 կատարողական վարույթով հարկադիր կատարողի կողմից 08.06.2022թ. կայացված «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» որոշումը:*

*Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Դուք կարող եք պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնել դատարան: Ձեր կողմից սնանկության դիմում ներկայացվելու դեպքում անհրաժեշտ է կատարողական վարույթը չվերսկսելու դիմումով այդ մասին տեղեկացնել հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ կցելով սնանկության դիմումը դատարան ներկայացված լինելու վերաբերյալ ապացույց:*

*Կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշման կայացման օրվանից սկսած 90-օրյա ժամկետում Ձեր կամ այլ անձանց կողմից դատարանին պարտապանի սնանկության դիմում չներկայացվելու դեպքում կատարողական վարույթը կվերսկսվի, և կատարողական գործողությունները կշարունակվեն, բացառությամբ եթե նշված ժամկետում հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ստանա միևնույն պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ նոր կատարողական թերթ, և հարուցվի նոր կատարողական վարույթ: Այդ դեպքում նոր կատարողական վարույթը ևս կկասեցվի 90-օրյա ժամկետով, և Ձեր մասնակցությամբ կատարողական վարույթը չի վերսկսվի, քանի դեռ նշված նոր կատարողական վարույթը կասեցված կլինի:*

*Անկախ վերոգրյալից՝ կատարողական վարույթը ցանկացած պահի կարող է վերսկսվել և կարճվել, եթե առկա լինեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված հիմքերը: Կատարողական վարույթը կվերսկսվի նաև այն դեպքում, եթե վերանան կասեցման հիմք հանդիսացած՝ պարտապանի սնանկության հատկանիշները:*

*Ձեր մասնակցությամբ կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով կասեցնելու մասին բոլոր որոշումները հրապարակվում են www.azdarar.am ինտերնետային կայքում:*

*Առդիր՝ « 1 » թերթ:*

***Բաժնի պետ,***
***Արդարադատության գնդապետ*** ***Մ.Խուրշուդյան***

*Կատարող՝ Դ.Քալոյան*
*Կ/վարույթ թիվ 06236182*

# Ո Ր Ո Շ Ու Մ
# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈւՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈւ ՄԱՍԻՆ

08.06.2022թ. ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Դավիթ Քալոյանս ուսումնասիրելով թիվ 06236182 կատարողական վարույթի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.06.2020թ. տրված թիվ ԵԴ/1906/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Արմեն Վարդգեսի Եղիազարյանից հօգուտ Կարեն Արշավիրի Նազարյանից բռնագանձել 5.023.408 ՀՀ դրամ:

Պարտապանից բռնագանձել նաև բառնագանձման ենթակա գումարի հինգ տոկոսը, որպես օրենքով սահմանված կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական վարույթներով բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ Հարկադիր ակատարումն ապահովող ծառայությունում պարտապան Արմեն Վարդգեսի Եղիազարյան վերաբերյալ հարուցված կատարողական վարույթով պահանջատիրոջ պահանջի ամբողջական կատարումը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 06236182 կատարողական վարույթը 90 օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90 օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում

**Հարկադիր կատարող,**
**Արդարադատության ավագ լեյտենանտ** **Դ.Քալոյան**